ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ....................Ռ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

<< 31 >> 08 20232թ.

# ԵՐԵՎԱՆԻ Հ.102 ԴՊՐՈՑԻ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ

# 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՏԱՐԵԿԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ Գ.Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱ

Բովանդակություն

1.Դպրոցի համապարփակ ընդհանուր բնութագիրը……………………………………2

2.Ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալի աշխատանքի

բովանդակությունը/կառավարում/…………………………………………………..5

3.Ուսուցիչների աշխատանքների գիտական և մեթոդական կառավարում…………….6

4.Ուսուցչի դասավանդման ուսումնասիրություն……………………………………….9

5.Երեխաների իրավունքների պաշտպանություն……………………………………12

6.Մեթոդական աշխատանք մանկավարժական կազմի հետ……………………………13

6.1 Ուսուցման կազմակերպման արդյունավետ եղանակներ.

կառուցողական մանկավարժություն ………………………………………………14

6.2Հանրակրթության պետական չափորոշիչ--------------------------------------------15

6.3 Ներառական կրթության :-------------------------------------------------------------19

7.Աշխատանք ՏՀՏ-ների օգտագործման համար…………………………………………22

8.Աշխատանք ծնողներ հետ…………………………………………………….23

9.Գործնական փաստաթղթերի վերահսկում և վերլուծություն………………… 24

10.Առարկայական մասնախմբերի աշխատանքների վերահսկողություն……………25

11.Ուսուցման և դաստիարակչական աշխատանքների վերահսկողություն………26

12. Ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալի տարեկան աշխատանքային պլանը………………………………-------------------------------------27

13.Մանկավարժական խորհրդի նիստեր…………………………………………………32

## 1.Դպրոցի համապարփակ ընդհանուր բնութագիրը

Երևանի հ. 102 հիմնական դպրոցը գտնվում է Աջափնյակ վարչական շրջանում, Ֆուչիկի 2-րդ նրբանցք 11 հասցեում: Դպրոցն աշխատում է մեկ հերթով՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմով, ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին ,32՝ երկրորդ,34՝ երրորդից իններորդ դասարաններում: Մեկ դասի տևողությունը 45 րոպե, դասամիջոցները 5-ական րոպե,մեծ դասամիջոցը 10 րոպե: Դասերի սկիզբը՝ ժամը $8^{30}$-ին:

Դպրոցում առկա են՝

Տարրական դասարաններ

I - 1

II - 2

III- 1

IV- 1

Միջին դասարաններ

V- 1

VI- 1

VII- 1

VIII- 1

IX- 1

Ընդամենը- 10-ը:

Դպրոցում ուսուցման լեզուն գրական հայերենն է:

Դպրոցի տիպը- հիմնական:

Ուսումնական տարվա սկիզբը մեկնարկում է 2023թ. սեպտեմբերի 1-ից ,ավարտվուււմ 2024թ. մայիսի 24-ին: Ուսումնական տարին բաժանվում է 2 կիսամյակների:Առաջին կիսամյակը պարունակում է 15 շաբաթ + 1օր,երկրորդ կիսամյակը 19 շաբաթ՝ 3-9 դասարաններում սովորողների համար:Առաջին դասարանում 14 շաբաթ +1օր առաջին կիսամյակում, երկրորդ կիսամյակում 16 շաբաթ:Երկրորդ դասարանում առաջին կիսամյակը պարունակում է 15 շաբաթ 1օր, երկրորդ կիսամյակում 17 շաբաթ: Ուսումնական տարվա ընթացքում տրվում են արձակուրդներ՝

3-9 դասարանցիների համար

- աշնանային՝ 2023թ. հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ :

- Ձմեռային՝ 2023թ. դեկտեմբերի 25-ից 2024 թ. հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2024թ մարտի 25-ից մարտի 31-ը ներառյալ:
- 2-րդ դասարանի համար աշնանային՝ 2023թ. հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ :
- Ձմեռային՝ 2023թ. դեկտեմբերի 25-ից 2024թ. հունվարի 21-ը ներառյալ, գարնանային՝ 2024թ մարտի 25-ից մարտի 31-ը ներառյալ:
- 1-ին դասարանի համար աշնանային՝ 2023թ. հոկտեմբերի 16-ից 29-ը ներառյալ :
- Ձմեռային՝ 2023թ. դեկտեմբերի 25-ից 2024 թ. հունվարի 21-ը ներառյալ, գարնանային՝ 2024թ մարտի 18-ից մարտի 31-ը ներառյալ:
- Դպրոցի տնօրեն - Հայրապետյան Ռուզաննա,

տնօրենի տեղակալ - Կիրակոսյան Գայանե,

մասնագիտացված կրթական աջակց. գծով տնօրենի տեղակալ- Վարդանյան Արաքս,

դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ- Գասպարյան Քնարիկ:

Դպրոցում գործում է 5 առարկայական մեթոդական միավորում.

Հումանիտար առարկաների / հայոց լեզու, գրակ. , պատմ.,Հ.եկ.պատմ. առարկաների / մ/մ նախագահ

- Խաչատրյան Մարգարիտա

Օտար լեզուների /ռ. լեզու, անգլերեն առարկաների/ մ/մ նախագահ

- Աթոյան Միրանուշ

Մաթեմատիկա / մաթեմատիկա, ինֆորմատիկա, շախմատ ,ֆիզկուլտուրա առարկաների / մ/մ նախագահ

- Մելքոնյան Ալինա

Բնագիտական առարկաների /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն,աշխարհագրություն,տեխնոլոգիա, ՆԶՊ առարկաների/

մ/մ նախագահ

- Թադևոսյան Անահիտ

Տարրական կրթության /դասվարական դասարանների, կերպարվեստ, երաժշտություն,ազգային երգ ու պար առարկաների / մ/մ նախագահ

- Աղայան Հասմիկ

## 2. Տնօրենի տեղակալի աշխատանքի բովանդակությունը /կառավարում/

| Հ. | Դպրոցի կառավարման ֆունկցիան | տնօրենի տեղակալ |
|---|---|---|
| 1 | Տեղատվական և վերլուծական | Ձևավորել դպրոցի տվյալների բանկը: Համակարգել մանկավարժական փորձը, կատարել հետազոտություններ մանկավարժության բնագավառում: |
| 2 | Թիրախը | Մանկավարժական խորհրդի հետ համատեղ սահմանել նպատակները, որը կնպաստի կոլեկտիվի և անհատական ուսուցիչների գիտական և մեթոդական աշխատանքների զարգացմանը: |
| 3 | Պլանավորում և տեսակավորում | Առարկայական մեթոդմիավորումների հետ միասին պլանավորել առարկայական թեմատիկ պլանները, մեթոդմիավորման նախագահների հետ կազմել տարեկան աշխատանքային պլաններ, որը կնպաստի ուսուցիչների աշխատանքների գնահատմանը: |
| 4 | Կազմակերպական և կատարողական | Կազմակերպել և համակարգել ծրագրերի իրականացումը: |
| 5 | Վերահսկում և գնահատում | Ուսումնական գործընթացի վերահսկողության և գնահատման իրականացումը բոլոր բնագավառներում: |
| 6 | Կարգավորիչ և ուղղիչ | Պահպանել դպրոցի բարի անունը: Շնորհիվ ուսուցիչ-աշակերտ-ծնող փոխշահավետ ուսուցման կազմակերպման գործընթացի, վերացնել սխալները և շեղումները: |

## 3. Ուսուցիչների աշխատանքների գիտական և մեթոդական կառավարում.

Ուսուցիչների մանկավարժական փորձը, մասնագիտական գիտելիքների ախտորոշումը և անհատական հատկանիշները հեշտացնում են ուսուցչական կազմի հետ աշխատանքը: Ցանկացած ուսուցչական անձնակազմ `տարբեր տարիքի, դասավանդման փորձով և պրոֆեսիոնալիզմով , ենթադրում է, որ մեթոդական աշխատանքում պետք է օգտագործել բազմաշերտ մոտեցում: Կարելի է բաժանել ուսուցիչներին երեք խմբերի, որոնք ունեն դասավանդման տարբեր հմտություններ և մակարդակ:

- Առաջին խումբ- ուսուցիչներ, որոնք ունեն բարձր մանկավարժական ունակություններ

Այս ուսուցիչներն իրենց աշխատանքում օգտագործում են դասավանդման նորագույն մեթոդներ, օգտագործում են ՏՀՏ-ների միջոցները: Այս կատեգորիայի ուսուցիչները տալու են նաև վարպետության դասեր:

- Երկրորդ խումբը –ուսուցիչներ, որոնք հոյակապ տիրապետում են իրենց առարկային:

Այն իր մեջ ներառում է շատ ուսուցիչներ: Նրանց հետ կարելի է կազմակերպել մեթոդական ամենամյա սեմինար:

- Երրորդ խումբ –երիտասարդ ուսուցիչներ, որոնց պետք են դասավանդման հմտություններ:

Այս ուսուցիչների հետ տանել մեթոդական աշխատանքներ աշակերտի դաստիարակության, մանկական հոգեբանության, երեխայի իրավունքի վերաբերյալ: Նրանց համար «ZOOM» –ով հաճախակի կազմակերպել սեմինար զեկուցումներ:

Ներդպրոցական վերահսկողության գործընթացում կարևոր մասը դասաժամերն են: Դասաժամերը նախատեսվում են ուսումնական շաբաթական պլանի հիման վրա, դրանք ամրագրված են դպրոցի ուսումնական պլանով:

Դպրոցի ղեկավարությունը պետք է շատ ուշադիր լինի դասապրոցեսի նկատմամբ:Այդ նպատակով նախ և առաջ պետք է ուսումնասիրել ուսուցչի աշխատանքը էլեկտրոնային մատյանում, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել աշակերտների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ:

Դասաժամը դա մանկավարժական աշխատանքի մի ամբողջականություն է , որը պետք է լինի դասի մասերի ներքին փոխկապվածությամբ, ուսուցչի և աշակերտների փոխըմբռնման և մեկ տեղակայման տրամաբանությամբ:Ուսուցիչը պետք է ապահովի

դասարանի բարձր առաջադիմությունն ու որակը:Կրթության որակը դա կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունքն է ,որը գնահատվում էª հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները ,կրթության կազմակերպման միջավայրը,ուսուցման ծրագրային բովանդակությունը,կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքներըª համաձայն սահմանված չափանիշների: Յուրաքանչյուր դասի կառուցվածքը համաձայն իր տրամաբանության, պետք է լինի հստակ, անցումը մի մասից մյուսը պետք է լինի սահուն:

Դասի վերլուծությունների տեսակները

1.Համառոտ գնահատման վերլուծություն – դասի և նրա կրթական գործառույթի ընդհանուր գնահատում, կրթական և զարգացման խնդիրների և դրանց իրականացման գնահատում:

2.Համակարգային վերլուծություն- դասը դիտարկել համակարգի տեսակետից՝ հիմնական նպատակների և դիդակտիկ լուծումների մեկ դաս,

զարգացնող դասի նպատակները-ապահովել գիտելիքների ձևավորումը, աշակերտների գիտելիքների և հմտությունների բազան, ուղղորդելով նրանց ուսուցման մեջ:

3.Լրիվ համակարգված վերլուծության առումով, այդ թվում դասի նպատակների գնահատումը, բովանդակությունը և ուսումնական գործունեության այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են աշակերտների գիտելիքների մակարդակը, ուսուցման և մեթոդների ընտրությունը,սկզբունքների իրականացման, դասավանդման արդյունավետությունը:

Վերլուծության նպատակն է գնահատել ուսուցչի աշխատանքը, բարելավել դասավանդման հմտությունները:

Այս դասի վերլուծության ժամանակ ուսուցիչը պետք է հաշվի առնի իր անձի բնութագիրը, տաղանդները, ուժեղ և թույլ կողմերը: Հնարավոր չէ պարտադրել, ընդհանուր առմամբ , նույն ուղեցույցները,տեխնիկան և մեթոդները: Բացթողումների և թերությունների դեպքում նս, պետք է բացատրել այնպես, որ պարզ լինի, թե ինչպես պետք է աշխատել:

## 4. Ուսուցչի դասավանդման ուսումնասիրություն

| Հ/հ | Այցելության նպատակը | Ուսումնասիրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ձևերը, մեթոդները, որոնք կնպաստեն աշակերտների ուսուցման և ճանաչողական գործունեությանը | 1.Ուսուցիչների կողմից օգտագործվող մեթոդներ, որոնք պետք է բարձրացնեն աշակերտների ուսուցման և ճանաչողական գործունեությունը<br>2.Ձևեր, որոնք նախատեսվում են դասարանում ավելի մեծ արդյունավետության ձևավորմանը առավել ակտիվ աշակերտների համար:<br>3.Ուսուցիչ- աշակերտ կապը: Ինչպես է դա արտացոլվում գործունեության ընթացքում:<br>4.Անհատական աշխատանքների ձևավորում:<br>5.Աշխատանքը ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ: |
| 2 | Ձևերը, մեթոդները և միջոցները, որոնք կնպաստեն աշակերտների գործնական հմտությունները զարգացնելու իրենց ուսուցման և ճանաչողական գործունեության ընթացքում | 1.Ինչ տեղ է տրվում ընդհանուր դասարանում կրթության զարգացմանը, աշակերտների հմտություններին և կարողություններին.Այս աշխատանքների արդյունքները.<br>2Արդյոք կրթական և ճանաչողական զարգացումը դասարանում աշակերտների գործունեության ձևավորման վրա առկա է, և պետք են հատուկ հմտություններ և գիտելիքներ տվյալ առարկայից:<br>3.Ցանկացած համակցություն ձևերի, մեթոդների և միջոցների կրթության գործընթացում կրթության և հմտությունների ինքնակառավարումը ապահովում է ավելի լավ արդյունք: |
| 3 | Հմտությունների ձևավորման վիճակը: Ձևերի և մեթոդների ընտրությունը դասարանում | 1.Ինչ հմտություններ են ձևավորվում ուսումնական գործընթացում. |

| | | |
|---|---|---|
| | անհատական աշխատող աշակերտների համար: | 2.Ինչ է օգտագործում ուսուցիչը դասարանում.<br><br>3.Որն է այս աշխատանքի ազդեցությունը.<br><br>4.Ինչ հմտություններ պետք է ունենա աշակերտը այս դասի համար.<br><br>5.Դասարանում աշակերտի հետ անհատական աշխատանքի առկայություն.<br><br>6.Ինչ ձևեր է օգտագործում ուսուցիչը անհատական աշխատանքի համար: Դրանց արդյունավետությունը. |
| 4 | Իններորդ դասարանի աշակերտների վերահսկողությունը | 1.Տնային աշխատանքների որակի, խնդիրների և դրանց ստուգման մեթոդների ընտրություն:<br><br>2.Աշակերտների կողմից դասի ընթացքում գիտելիքների որոնման ուղիների խրախուսում:<br><br>3.Ուսուցման ձևերի ու մեթոդների ընդլայնման և ճանաչողական գործունեություն:<br><br>4.Ուսուցիչ և աշակերտ հարաբերությունների բնույթը:<br><br>5.Բացթողումներ դասերից ,առանց հարգելի պատճառի:<br><br>6. Աշխատանք դասղեկի հետ: |
| 5 | Գործնական ուղղվածությունը 4-5-րդ դասարաններում: | 1.Դասի նպատակը:<br><br>2.Բանավոր և գրավոր առաջադրանքների հերթականությունը, բանավոր աշխատանքի իրականացման ձևերը, գործնական աշխատանքը:<br><br>3.Ընթերցանության զարգացվածության մակարդակը, հմտությունները:<br><br>4.Սերը դեպի հայրենիքը, հայրենի բնությունը:<br><br>5.Ինքնուրույն աշխատանքում հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդները:<br><br>6.Ինքնակառավարման, վերահսկողության մեթոդների ձևավորումը: |
| 6 | Գործնական ուղղվածության ուսուցում | 1.Գործնական հմտությունների ձևավորում:<br><br>2.Աշակերտների ակտիվության մակարդակի վերահսկում:<br><br>3.Աշակերտների անհատական աշխատանքի կազմակերպում (տարբերակված խնդիրներ):<br><br>4.Ստեղծագործական հանձնարարությունների ներկայացում: |
| 7 | Դպրոցի նպատակներին ուղղված համապատասխան դաստիարակչական և կրթական աշխատանքների կատարումը: | 1.Անհատական մոտեցում դասարանում աշակերտների ուսուցման և կրթության գործում, մատչելիություն ու որակ:<br><br>2.Խնդիրների տեղայնացում ու լուծում դասարանում. ա) |

| | | |
|---|---|---|
| | | ուսուցում, բ) դաստիարակություն, գ) զարգացում:<br>3.Աշակերտների ուսուցման և ճանաչողական գործունեությանը նպաստող մեթոդներ:<br>4.Դասի կրթական առաջադիմության մակարդակը. ա) ուսումնական նյութերի օգտագործում դաստիարակության համար,<br>բ) հանդուրժողականության գնահատումը դասարանում: |
| 8 | Բացահայտել դժվարությունները. դրանց կանխարգելումը | 1.Ուսուցչի տեսական իմացությունը:<br>2.Կարողանում է արդյոք ուսուցիչն օգտագործել մեթոդներ և հնարքներ. ա) դասարանում անհատական աշխատանքի կազմակերպում, բ) աշակերտների աշխատանքի կազմակերպում, գ) դասի նպատակի ճիշտ ընտրություն, դ) բովանդակությունը, մեթոդների ընտրություն՝  ելնելով ուսուցման դասի նպատակներից, ե) դասի տրամաբանական հիմնավորում:<br>3.Արդյոք ուսուցիչն օգտագործում է ակտիվ ուսուցման ձևեր:<br>4.Աշակերտների ուսուցման և ճանաչողական գործունեության բարձրացման կարողություն: |
| 9 | Դպրոցում խմբակների աշխատանքի կարգավորում | 1.Խմբակի աշխատանքների և աշակերտների հաշվառում (մատյան):<br>2.Անհրաժեշտության դեպքում  աշակերտների մասնակցությունը հեռավար դասերին:<br>3.Խմբակի արդյունավետության գնահատում: |

## 5. Երեխաների իրավունքների պաշտպանություն

1. Երեխաների սոցիալական և իրավական պաշտպանություն

    1.1. Կենսամակարդակի ուսումնասիրում

    1.2. Հարաբերությունները ծնողների, հարազատների հետ

    1.3. Առարկայական պատրաստվածության մակարդակը

    1.4. Դաստիարակության նկարագիրը

    1.5. Արտադպրոցական զբաղվածությունը, ազատ ժամանակի կազմակերպումը

    1.6. Առողջական վիճակը

2. Աշխատանք բազմազավակ ընտանիքների հետ:

3. Աշխատանք սոցիալապես անապահով ընտանիքների հետ:

## 6. Մեթոդական աշխատանք մանկավարժական կազմի հետ

Նպատակը --- Մասնագիտական զարգացումը, դասավանդման հմտությունները, իր ուսումնական առարկայի ուսուցման և մեթոդների շարունակական կատարելագործումը: Մարդը սովորում է ողջ կյանքի ընթացքում: Ըստ սոցիոլոգների 20 տոկոսը տեղեկություն են ստանում անհատական ֆորմալ ուսուցման միջոցով՝ քոլեջների, համալսարանների, դասընթացների և սեմինարների, մնացած 80 տոկոսը՝ իրենց գիտելիքների և, որ ամենակարևորն է, այդ փորձը նրանք ստանում են ոչ ֆորմալ ուսուցման ժամանակ՝ աշխատավայրում, ինչպես նաև այլ մարդկանց հետ փոխհարաբերությունների ժամանակ: Դպրոցի մեթոդական ծառայությունը բազմաշերտ կառուցվածք ունի: Մեթոդաբանական գործունեությունը հիմնականում ուղղված է.

- Թիմային հաջողությունների մասնակցությանը և համագործակցությանը
- Ստեղծել ստեղծագործական որոնումներով ուսուցչական կազմ
- Բարձրացնել ուսուցիչների մեթոդական հմտությունները
- Ակտիվացնել որակյալ ուսուցիչների կառավարման գործում մասնակցությունը
- Ուսուցիչների որակավորման հավաստագրումը
- Ուսումնական գործընթացի որակի բարձրացումը
- Ստեղծել նորարարական գաղափարների և տեխնոլոգիաների բանկ

Մեթոդական ծառայությունները ստեղծում են միջավայր, որտեղ ուսուցիչները կարող են ներդնել իրենց ներուժը: Այս կապակցությամբ պետք է անընդհատ որոնել առավել արդյունավետ ուղիներ, ձևեր և մեթոդներ մեթոդական աշխատանքի համար:

Մեթոդաբանական աշխատանքների ձևեր.

- Բանավեճ, քննարկում
- Ուսուցիչների հանդիպում
- Կազմակերպում մեթոդական օր, շաբաթ
- Ստեղծագործական հաշվետվություն
- Մանկավարժական գաղափարների «Մտագրոհ», կլոր սեղան
- Մանկավարժական խորհուրդ
- Շնորհանդես
- Մտագրոհ
- Փորձ
- Ելույթներ, մանկավարժական ընթերցումներ
- Սեմինարներ, դասընթացներ
- Արդի խնդիրների քննարկում
- Ինքնակրթություն, ինքնուրույն հաշվետվություններ

- Ցուցահանդեսներ
- Վարպետության դասեր
- Ստեղծագործական թիմ

Յուրաքանչյուր տարի կազմելով ուսումնական աշխատանքային պլանը, դպրոցը բարձրացնում է մի շարք կոնկրետ նպատակային խնդիրներ, որով պետք է աշխատի ուսուցչական անձնակազմը: Դրանցից մեկը ուսուցիչների որակի բարձրացումն է: Ընտրվում է առավել արդյունավետ ձևեր այս նպատակին հասնելու համար:

- Սեմինարներ, ընթերցումներ
- Մեթոդական խորհուրդ
- Հոգեբանական և կրթական ընթերցում
- Հետազոտություն

Իր հատուկ դերն ունի ուսուցիչների ինքնակրթությունը՝ մեկը կարևորագույն ձևերից մեթոդական աշխատանքի համար:

- ♦ Լուծել կոնկրետ խնդիր իր գործնական բնույթով (դասագրքի փորձարկում)

- Քննադատական ակնարկ պարբերականների
- Վերանայել գոյություն ունեցող ձևերը և դրանց իրականացման ճանապարհների որոնում
- Վերլուծություն, հաշվի առնելով առկա սխալները, թերությունները, այն վերացնելու ուղիները
- ՏՀՏ-ի օգտագործումը դասի պատրաստման. դասապրոցեսում օգտագործելու համար

Տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են աշակերտներն ու ուսուցիչներն ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու Համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները:Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին, տեխնոլոգիաներն ուսանողներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21–րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:Ժամանակակից պայմաններում հարկավեր է արդյունավետ, նորարարական և մեթոդական աշխատանք, որի նպատակն է նորարարական տեխնոլոգիաների ներդրման, նորարարական գաղափարների նախագծման կիրառումը:

## 6.1 Ուսուցման կազմակերպման արդյունավետ եղանակներ. կառուցողական մանկավարժություն

Կառուցողական մանկավարժությունն ընդհանուր հասկացություն է: Այն ոչ թե մեթոդ է, այլ մոտեցում, որը հիմնված է այն ենթադրության վրա, որ անհատն իր գիտելիքները ձևավորում (զարգացնում) է՝ ակտիվորեն մասնակցելով ճանաչողական գործընթացին: Այս մտավոր գործընթացի համար անհրաժեշտ է նաև, որ աշակերտը համագործակցի մյուսների հետ: Պարզեցված և համակարգված ուսումնական ծրագիրն աշակերտին չի կարող նման փորձառություն տալ, մինչդեռ իրական իրավիճակները կարող են:

Խիստ կարևոր է համընդգրկուն ուսումնական միջավայրի ստեղծումը: Տեղեկատվության աղբյուրն այլևս գրքերն ու ուսուցիչները չեն, այլ իրական կյանքը: Խմբային աշխատանքի միջոցով աշակերտները

հնարավորություն ունեն իրական կյանքին նմանեցված իրավիճակներում որոնելու իրական խնդիրների լուծումներ՝ օգտագործելով տարբեր ձևեր և տարատեսակ եղանակներ: Կառուցողական մանկավարժության համար անհրաժեշտ են ուսման հատուկ պայմաններ, որոնք հնարավորություն կտան աշակերտներին համագործակցելու և օգնություն ցուցաբերելու միմյանց: Նրանք կարող են օգտվել մի շարք գործիքներից և տեղեկատվության աղբյուրներից՝ իրենց խնդիրները լուծելու և նպատակին հասնելու համար:

Անհատական համակարգիչներով կահավորված դասարաններում կարող են կիրառվել մի շարք մանկավարժական մեթոդներ և ուսման եղանակներ (ինչպես օրինակ՝ խնդրի լուծմանն ուղղված և նախագծերի վրա հիմնված ուսուցում): Անհատական համակարգիչներով համալրված դասարանները շատ ավելի հարմար են ուսման ժամանակակից եղանակներ կիրառելու համար, քան ավանդական դասասենյակները, նույնիսկ եթե մեկ համակարգչից օգտվում է մի քանի աշակերտ: Պատշաճ կերպով կազմակերպված ուսման և աշխատանքային պայմաններում համագործակցային ճանաչողական գործընթաց կազմակերպելու համար բավարար է մեկ կամ երկու անհատական համակարգիչ: Տիպիկ ՏՏ սենյակն՝ իր սահմանափակ տարածքով և աշակերտական սեղանների ոչ ճկուն դասավորվածությամբ չի նպաստում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման սարքերի ինտեգրմանը կրթական գործընթացին:

## 6.2 Հանրակրթության պետական չափորոշիչ

Հանրակրթության պետական չափորոշիչը մշակվում է Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:

Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչներից՝

1) ուսումնական բնագավառներ, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջներ.
2) շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ).
3) հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ.
4) սովորողների գնահատման ձևեր, սանդղակ, հաշվառման կարգ:

Կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են ըստ ուսումնական բնագավառների և հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

### 1. Գիտելիքների համակարգ

Ելնելով դպրոցի տարբեր աստիճանների նպատակներից՝ այս բաղադրիչով սահմանվում են սովորողների յուրացման համար նախատեսված գիտելիքներ:

### 2. Կարողունակություններ

Այս բաղադրիչով տրված կարողունակություններ ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացված գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությոըթյունները, նպաստում է նրա սոցիալականացմանը:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական

աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Հանրակրթական տարրական ծրագիրը պետք է միտված լինի ստորև ներկայացված ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը: Ծրագրի շրջանավարտը պետք է՝

1) ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով).

2) առնվազն երկու օտար լեզվով, այդ թվում այլընտրանքային հաղորդակցման միջոցներով, հասկանա և օգտագործի ծանոթ և պարզ նախադասություններ՝ բավարարելու կոնկրետ կարիքները, կարողանա ներկայանալ, ներկայացնել իր շրջապատի մարդկանց՝ իր և նրանց մասին հաղորդելով պարզ տեղեկություններ, հաղորդակցվել գրավոր և բանավոր՝ գործածելով պարզագույն կառույցներ.

3) օգտագործի ունեցած գիտելիքները և հմտությունները օբյեկտները չափելու, հաշվելու, համեմատելու, նկարագրելու, դրանց քանակական, որակական և տարածական պարզ հարաբերակցությունները գնահատելու համար.

4) ճանաչի և պատկերի որոշ երկրաչափական պատկերներ, ունենա պարզ տարածական պատկերացում.

5) կառուցի ֆիզիկական և մաթեմատիկական պարզ մոդելներ.

6) գրավոր և բանավոր կատարի գործողություններ թվային արտահայտությունների հետ.

7) մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ.

8) դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.

9) հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար.

10) նկարագրի շրջակա աշխարհի օբյեկտները, երևույթները և դրանց փոխադարձ կապերը.

11) իմանա, որ շրջապատող աշխարհի ճանաչողության եղանակներից մեկը գիտությունն է, ներկայացնի մարդու և բնության վրա գիտության որոշ ձեռքբերումների ազդեցությունը.

12) համատեղ կամ ինքնուրույն իրականացնի պարզ հետազոտական աշխատանքներ, անի եզրակացություններ՝ հիմնվելով ստացված տվյալների և դիտարկումների վրա, փաստերն օգտագործի իր գաղափարները հիմնավորելու համար և ներկայացնի ստացված արդյունքը պարզ գիտական բառապաշարով.

13) տարբերակի և կիրառի բնական ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու ձևերը, մասնակցի բնապահպանական միջոցառումների, ճանաչի էկոհամակարգերը և դրանց փոխադարձ կապերը.

14) օգտվի պարզ թվային սարքերից, համակարգչային ծրագրերից, հավելվածներից, աջակցող սարքերից և սարքավորումներից, կարողանա օգտագործել դրանք՝ պահպանելով անվտանգության կանոնները.

15) օգտագործի տարբեր եղանակներ թեման պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար.

16) ճանաչի իր հայրենիքը, ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին.

17) ճանաչի և հարգի Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները և ներկայացնի պետական և ավանդական տոների հիմնական բովանդակությունը.

18) ճանաչի և հոգատար վերաբերմունք ցուցաբերի իր բնակավայրի և համայնքի բնության և պատմամշակութային ժառանգության օբյեկտների հանդեպ.

19) կատարի պարզ ֆինանսական գործողություններ՝ վերլուծելով իրավիճակը և հաշվի առնելով գումարը, ժամանակը և այլ ռեսուրսներն ու դրանք խնայելու, անվտանգ օգտագործելու կարևորությունը.

20) ճանաչի և բերի ձեռնարկատիրական գործունեության օրինակներ.

21) ճանաչի և պահպանի հասարակական վարքի՝ իրեն առնչվող կանոններն ու իրավունքները, այդ թվում՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասով, հարգի ուրիշ մարդկանց, ընկալի յուրաքանչյուր մարդու առանձնահատուկ և արժեքավոր լինելը.

22) կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ.
23) ճանաչի տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազանությունը.
24) ստեղծի ընկերական հարաբերություններ, լսի, հասկանա, ապրումակցի, քաջալերի և աջակցի մյուսներին, համագործակցի տարբեր ձևաչափերով, դրսևորի դրական վերաբերմունք, ձգտի կոնֆլիկտների խաղաղ լուծման.
25) ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, կիրառի դրանք աշխարհաճանաչողության գործում.
26) արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը.
27) կարևորի իր առօրյան կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ժամանակ տրամադրելով հանգստին, խաղին և դասերին.
28) գտնի իր սխալները և քայլեր անի դրանք ինքնուրույն կամ աջակցությամբ ուղղելու համար.
29) ճանաչի իր ընտանեկան, ազգային և քաղաքացիական պատկանելությունը. ցուցաբերի այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք.
30) զբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ.
31) ճանաչի և խուսափի վնասակար սովորություններից, բացատրի դրանց հետևանքները.
32) դրսևորի տարրական աշխատանքային հմտություններ, անվտանգ կերպով օգտվի կենցաղային սարքերից, աշխատանքային գործիքներից և նյութերից.
33) դրսևորի իր մտավոր և ֆիզիկական կարողությունները շարունակաբար զարգացնելու վարքագիծ.
34) պահպանի սեփական մարմնի խնամքի, հիգիենայի և անվտանգ վարքագծի կանոնները, ներկայացնի առողջ, բազմազան և բալանսավորված սնվելու անհրաժեշտությունը.
35) կարևորի աշխատանքը, ճանաչի տարբեր մասնագիտություններ և զբաղմունքներ, ըստ մասնագիտության աշխատանքային գործիքները և գործառույթները:

Հանրակրթական հիմնական ծրագիրը պետք է միտված լինի հետևյալ ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը: Ծրագրի շրջանավարտը պետք է՝
1) վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով).
2) հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառի ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով).
3) առնվազն երկու օտար լեզուներով (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում՝ առնվազն մեկ) հասկանա ծանոթ, պարբերաբար հանդիպող թեմաներով բանավոր և գրավոր խոսքի հիմնական իմաստը, լեզվակիր երկրներում կարողանա կողմնորոշվել և հաղորդակցվել հաղորդակցական պարզ իրավիճակներում.
4) իրականացնի չափումներ, կատարի մտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատի արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ.
5) կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս.
6) կառուցի և կիրառի տարբեր մաթեմատիկական մոդելներ, լուծի խնդիրներ՝ օգտագործելով պարզ ալգորիթմներ և տրամաբանական հիմնավորումներ.
7) որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք.
8) վերլուծի, գնահատի և առաջարկի դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից.
9) կիրառի բնագիտական առարկաներից ստացված հիմնարար գիտելիքները բնության և տիեզերքի օբյեկտների նկարագրության, երևույթների և դրանց փոխադարձ կապերի բացատրության, ֆիզիկական մոդելավորման և խնդիրների լուծման համար.
10) ներկայացնի գիտության նվաճումների՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա.
11) մասնակցի բնապահպանական միջոցառումների պլանավորմանը և իրականացմանը.
12) կիրառի տեքստային և գրաֆիկական խմբագրիչները, այդ թվում՝ աջակցող տեխնոլոգիաներ, կարողանա մշակել տվյալներ՝ օգտագործելով անհրաժեշտ թվային գործիքներ և ծրագրեր.

13) տիրապետի թվային տարածքում ապահով գտնվելու կանոններին, պահպանի օնլայն հաղորդակցության էթիկան, տեղյակ լինի անձնական տվյալների գաղտնիության կանոններին և կիրառի դրանք, մեկնաբանի յուրաքանչյուր անձի անձնական տարածք (ֆիզիկական և հոգեբանական) ունենալու իրավունքն ու անհրաժեշտությունը.

14) կարողանա ստեղծել թվային տարածք և դրսևորել ծրագրավորման պարզ հմտություններ.

15) նկարագրի տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների, հայոց և համաշխարհային պատմության իրադարձությունների փոխկապակցվածությունը.

16) կարողանա մասնակցել Հայաստանի հիմնախնդիրների քննարկմանը՝ օգտագործելով պատմության, բնության, բնակչության, պետության և տնտեսության մասին ունեցած համապատասխան գիտելիքները.

17) նկարագրի բնության, բնակչության և տնտեսության միջև եղած փոխադարձ կապերը և դրանց արդյունքում ձևավորված համակարգերը.

18) նկարագրի կայուն զարգացման էությունը, հիմնական գաղափարները ու դրանց փոխադարձ կապերը.

19) կարևորի անձնական, ընտանեկան և համայնքային բյուջեի կառավարումը և վերահսկողությունը՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը: Բացատրի խնայողությունների և պարտքի դերն ու արդյունավետ կիրառելու մոտեցումները.

20) վերլուծելով ֆինանսական տեղեկությունը՝ կարողանա համեմատել ֆինանսական ծառայություններ և կազմակերպություններ: Ճանաչի ֆինանսական ոլորտում քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները.

21) տարբերի ձեռնարկատիրական գործունեության տեսակները և իրականացման ձևերը, նկարագրի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը բիզնես գործունեության մեջ.

22) հետևի հասարակական համակեցության կանոններին և նորմերին, բացատրի դրանց կարևորությունը, ցուցաբերի պատասխանատու և հանրօգուտ վարքագիծ.

23) ներկայացնի և քննարկի համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները.

24) տարբերակի և համեմատի աշխարհաճանաչողության ձևերը և դրանց առանձնահատկությունները.

25) գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ.

26) ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ.

27) բացատրի գիտելիքի կարևորությունը, սովորելիս դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ.

28) դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր.

29) ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.

30) գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ.

31) արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.

32) արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.

33) ճանաչի իր ուժեղ ու թույլ կողմերը և դրսևորի ինքնազարգացմանը միտված վարքագիծ.

34) ընկերակցի, դրսևորի բաց և դրական վերաբերմունք այլոց հանդեպ, համագործակցի և հաղորդակցվի տարբեր ձևաչափերով, ակտիվորեն լսի և հարգանքով վերաբերվի այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին.

35) բացատրի կոնֆլիկտների ազդեցությունը միջանձնային և միջխմբային հարաբերությունների վրա, կիրառի կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբեր ձևեր ըստ անհրաժեշտության.

36) կարողանա հավասարակշռել և ներդաշնակել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, հակումները, ընդունել սեփական յուրահատկությունները.

37) դիմակայի ճնշումներին և իմանա՝ ում դիմի աջակցության և խորհրդատվության համար.

38) ներկայացնի երեխայի, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, բացատրի, թե ինչ դեր ունեն անհատը և պետությունը դրանք հարգելու և պաշտպանելու գործում.

39) բացատրի քաղաքացիության, իրավունքի ու պարտականության էությունը և ժողովրդավարության նշանակությունը սոցիալական արդար և ներդաշնակ համակեցության ապահովման գործում.

40) հիմնավորի հասարակական բոլոր գործընթացներում հավասար հնարավորությունների ընձեռման նշանակությունը, այդ թվում՝ կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և իրավունքների մասով.

41) ցուցաբերի հանդուրժողականություն, ապրումակցում և մարդասիրություն.

42) դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ.
43) ճանաչի ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտի իր գաղափարները և հույզերը.
44) ճանաչի տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրի դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ.
45) ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ.
46) դրսևորի աշխատանքային հմտություններ, կարողանա հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր սարքեր, գործիքներ և նյութեր.
47) ճանաչի սեփական ֆիզիկական հնարավորությունները և դրանց համապատասխան զարգացնի իր շարժողական ընդունակությունները.
48) տեղեկացված և պատրաստ լինի հասունացման շրջանում իր և տարեկիցների հետ կատարվող ֆիզիկական, ֆիզիոլոգիական և հոգեբանական փոփոխություններին, ունենա ինքնախնամքի, հիգիենայի հմտություններ.
49) ճանաչի և վերլուծի դեռահասության շրջանում հավանական ռիսկերը և ունենա դրանցից խուսափելու և (կամ) նման իրավիճակներում կողմնորոշվելու հմտություններ.
50) տիրապետի քաղաքացիական պաշտպանության և առաջին օգնության հիմունքներին, ճիշտ կողմնորոշվի արտակարգ իրավիճակներում.

51) կարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները և կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության

## 6.3 Ներառական կրթության:

ՀՀ-ն 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին:

ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, որի 38-րդ հոդվածի համաձայն <<Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պարտադիր կրթության նվազագույն տևողությունը տասներկու տարի է: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգկրթությունն անվճար է>>:

